

ՅԾ-Հաշվետար 6

ՅԾ-Հաշվետար 6 համակարգը մշակվել է հատուկ փոքր կազմակերպությունների համար և իր մեջ ներառում է այն հիմնական առանձնահատկությունները, որոնք կարևոր են այդ հիմնարկների հաշվապահների համար:

ՅԾ-Հաշվետար 6-ի հիմնական առանձնահատկությունները

Տեղադրման և օգտագործման պարզություն

Համակարգի տեղադրումն ու դրա հետ հետագա աշխատանքը շատ պարզ են և չեն պահանջում կազմակերպությունում տեխնիկական մասնագետի ներկայություն կամ հաշվապահների խորը վերապատրաստում: Համակարգի տեխնիկական պահանջները բարձր չեն, այսինքն կազմակերպությանը սովորաբար անհրաժեշտ չի լինում համակարգի շահագործման համար ձեռք բերել լրացուցիչ համակարգչային տեխնիկա կամ ծրագրային ապահովում:

Չի պահանջում հատուկ ուսուցում և ծավալուն ներդրման աշխատանքներ

Ծրագրի օգտագործման համար չի պահանջվում հատուկ ուսուցում: Ծրագրի ավելի խորը հնարավորություններին կարելի է ծանոթանալ էլեկտրոնային ռեսուրսների միջոցով: Հզոր ու ճկուն հաշվետվական համակարգ:

ՅԾ-Հաշվետար 6 համակարգի առավելությունները

Անսահմանափակ քանակությամբ հաշվառումներ վարելու հնարավորություն

ՅԾ-Հաշվետար 6 համակարգում կարելի է վարել անսահմանափակ քանակությամբ կազմակերպությունների հաշվառում:

Հաշվապահությունն ու բանկային հաշիվների կառավարումը մեկ համակարգից

ՅԾ-Հաշվետար 6-ն իր մեջ ուղղակիորեն ներառում է ինտեգրացիոն բանկինգի համակարգ: Սա թույլ է տալիս կառավարել բանկային հաշիվներն անմիջապես հաշվապահական համակարգից, խուսափել տվյալներն այլ համակարգ արտահանելու կամ ներմուծելու լրացուցիչ ֆայլից:

Համակցում ՊԵԿ-ի e-Invoicing համակարգի հետ

ՅԾ-Հաշվետար 6 համակարգից հարկային հաշիվները արտահանվում են էլ. հարկային հաշիվների e-Invoicing համակարգ, որտեղից կատարվում է մատակարարներից ստացված հարկային հաշիվների ներմուծում:

Համակցում MS Word, MS Excel, Open Office ծրագրերի հետ

Համակարգից տվյալները կարող են արտահանվել MS Word, MS Excel և Open Office միջավայրեր:

Ժամանակակից, գեղեցիկ, հարմար աշխատանքային միջավայր

- Համակարգի աշխատանքային միջավայրը կառուցված է ծանոթ ու հարմար MS-Office ոճով: Սա թույլ է տալիս օգտագործողներին հեշտությամբ սկսել համակարգով աշխատանքը և խուսափել նոր աշխատանքային միջավայրին սովորելու համար ծախսվող ժամանակից և անհարմարությունից:
- Համակարգն աշխատում է Unicode-ով, ինչը հնարավոր է դարձնում ցանկացած լեզվով մուտքագրված տվյալների հետ աշխատանքը:
- Մուտքագրման ժամանակ կատարվող բազմաթիվ ստուգումներն ապահովում են տվյալների ամբողջականությունն ու ճշտությունը:
- Համակարգն ունի գունային ու տառատեսակների տարբեր թեմաներ: Յուրաքանչյուր օգտագործող կարող է ընտրել համակարգի՝ իրեն առավելապես հարմար տեսքը:

Չզոր ու ճկուն հաշվետվական համակարգ

Հաշվետվություններում տվյալների ֆիլտրման, խմբավորման, հանրագումարների ավելացման, սյուների ընտրման գործիքները թույլ են տալիս անմիջապես աշխատանքի ընթացքում, առանց որևէ ջանքի համակարգից ստանալ ցանկացած տվյալ, ցանկացած տեսքով

Արտահանում և ներմուծում

Բոլոր տվյալները արտահանվում և ներմուծվում են XML ֆորմատի ֆայլերի միջոցով:

Սահուն անցում ՅՇ-Հաշվապահ 6 համակարգին

ՅՇ-Հաշվետար 6-ը թույլ է տալիս ոչ միայն գործնական կիրառել համակարգը, այլև սովորել աշխատանքային միջավայրին և սահուն անցում կատարել ավելի ֆունկցիոնալ ՅՇ-Հաշվապահ 6 համակարգին: Ցանկացած պահի հեշտությամբ հնարավոր է տվյալները տեղափոխել ՅՇ-Հաշվապահ 6 համակարգ և շարունակել աշխատանքը ավելի ֆունկցիոնալ տարբերակում: ՅՇ-Հաշվետար 6 և ՅՇ-Հաշվապահ 6 համակարգերի համեմատական տեղեկագիրը կարող եք տեսնել Հավելված 1-ում:

Համառոտ Ֆունկցիոնալ նկարագրություն

Գլխավոր գիրք

Գլխավոր գիրքը հաշվապահական հաշվառման կենտրոնական մասն է հանդիսանում, ուր փոխանցվում և հաշվառվում են հաշվապահական գործառնությունները բոլոր ենթաբաժիններից: Այդ պատճառով հաշվապահական համակարգում խիստ կարևոր են այս բաժնի հզորությունը, ճկունությունը և տեղեկատվական հատկությունները:

ՀԾ-Հաշվետար 6 համակարգում ներդրված է կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, սակայն համակարգի ճկունությունը թույլ է տալիս փոփոխել այն, առավելագույնս հարմարեցնելով ձեր կազմակերպությանը, ինչպես նաև մուտքագրել ցանկացած այլ հաշվային պլան (բյուջետային կազմակերպությունների, բանկերի):

Հաշվային պլանում օգտագործողը կարող է կատարել հետևալ փոփոխությունները.

- ավելացնել և հեռացնել հաշիվներ
- Նշել հաշվի տեսակը՝ ակտիվային, պասիվային կամ ակտիվ-պասիվային
- Նշել հաշվի բաժինը՝ հաշվեկշռային կամ արտահաշվեկշռային
- սահմանել հաշվի համար հասանելի արժույթների ցանկը
- սահմանել անալիտիկ հաշվառումն ըստ գործընկերների:

Համակարգում ներդրված են ստուգումների և ավտոմատ գրանցումների մեխանիզմներ, որոնք բազմակի կրճատում են հաշվապահի աշխատանքը և ապահովում են գրանցումների ճշտությունը: Բացի ձեռքով գործառնություններ գրանցելուց, ՀԾ-Հաշվետար համակարգն.

- ավտոմատ առաջարկում է գործառնություններ՝ գրանցված փաստաթղթերի հիման վրա
- թույլ է տալիս նկարագրել թղթակցությունների սցենարներ և այնուհետ օգտագործել դրանք
- գործառնություն գրանցելիս ստուգում է հաշվի մնացորդը, ապահովելով հաշվապահական տվյալների ճշտությունը
- ստուգում է գրանցվող թղթակցությունը սահմանված թույլատրելի թղթակցությունների հետ:

Հզոր հաշվետվական համակարգը թույլ է տալիս հաշվապահական գործառնությունների հիման վրա ստանալ ոչ միայն անհրաժեշտ բոլոր հաշվապահական և հարկային հաշվետվությունները, այլև բազմաթիվ այլ հաշվետվություններ, որոնք թույլ կտան անընդհատ տիրապետել կազմակերպության վիճակի ամբողջական պատկերին և ընդունել արդյունավետ որոշումներ:

Հաշվետվությունների վրա կիրառվող բազմաթիվ ֆիլտրերը՝ ամսաթվի, արժույթի, գործընկերոջ և այլն, հնարավորություն են տալիս ստանալ էլ ավելի մանրամասն ինֆորմացիա:

Գլխավոր գրքից ստացվող հաշվետվություններն են.

- Հաշիվները մնացորդները ցանկացած ամսաթվի դրությամբ՝ դրամով և արտարժույթով
- Հաշիվների շրջանառությունը ցանկացած ժամանակաշրջանի համար՝ դրամով և արտարժույթով
- T-հաշիվը ցանկացած ժամանակաշրջանի համար՝ դրամով և արտարժույթով
- ֆինանսական հաշվետվությունները՝ հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփականության արդյունքների մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն:

Դրամական միջոցներ

Համատեղ Գլխավոր գիրք բաժնի հետ Դրամական միջոցներ բաժինը ծառայում է կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների մուտքերի և ելքերի գրանցումների համար:

Իրականացված հաշվառումն ապահովում է դրամական հոսքերի մշտական վերահսկողություն, և թույլ է տալիս կամայական պահին լինել ճշգրիտ տեղեկացված բոլոր դրամական միջոցների մնացորդներից:

Գործողություններ՝

- դեբիտորների, կրեդիտորների ու առհաշիվ անձանց հետ փոխհաշվարկներ և կանխիկ, և անկանխիկ դրամական միջոցներով,
- կանխիկ միջոցների մուտքագրում դրամարկղ կամ հաշվարկային հաշիվ,
- կանխիկ միջոցների ելքագրում դրամարկղից կամ հաշվարկային հաշվից,
- արտարժույթի փոխարկում,
- արտարժույթային դրամարկղի և հաշվարկային հաշիվների մնացորդների վերագնահատում
- ՀՀ տարածքում դուրս գրված վճարման հանձնարարագրերի արտահանում ՀԾ-ԿլիենտԲանկ կամ ՀԾ-ԻնտերնետԲանկ,
- Հաշվարկային հաշվին կատարված մուտքերի ներմուծում ՀԾ-ԿլիենտԲանկ կամ ՀԾ-ԻնտերնետԲանկ և դրանց հիման վրա հաշվապահական ձևակերպումների ավտոմատ գրանցում:

Փաստաթղթեր՝

- Վճարման հանձնարարագիր,
- Դրամարկղի մուտքի օրդեր,
- Դրամարկղի ելքի օրդեր,

Հաշվետվություններ՝

- կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների մնացորդները և շրջանառությունը՝ դրամով և արտարժույթով
- դրամական միջոցների շարժի գործողությունների մատյան՝ դրամով և արտարժույթով,

Դեբիտորներ և կրեդիտորներ

Համատեղ Գլխավոր գիրք բաժնի հետ այս բաժինը ծառայում է մատակարարների, գևորդների, առհաշիվ անձանց և այլ դեբիտոր/կրեդիտորների հետ փոխհաշվարկների վերահսկման համար:

Այս բաժինը թույլ է տալիս բարձրացնել հաշվապանների աշխատանքի արդյունավետությունը կրճատելով վաճառքի կամ վճարման փաստաթղթերի դուրսգրման ժամանակը: Հետևել և ժամանակին բացահայտել չվճարված դեբիտորական պարտքերը՝ նվազեցնելով ժամկետանց պարտքերի թիվը և լավացնել դրամական մուտքերի հոսքը: Պարզել և խրախուսել պարտաճանաչ գևորդների:

Գործողություններ՝

- վաճառված ապրանքանյութական արժեքների, արտադրանքի, ծառայությունների և հիմնական միջոցների գծով դեբիտորական պարտքերի արտացոլումը և դրանց մարումը
- ձեռքբերված ապրանքանյութական արժեքների, հիմնական միջոցների և ստացված ծառայությունների գծով կրեդիտորական պարտքերի արտացոլումը և դրանց մարումը
- պարտքերի փոխմարումը ստացված կամ տրված կանխավճարի հաշվին
- առհաշիվ տրված գումարների գծով դեբիտորական պարտքերի և հաշվետու անձանց կողմից ծախսված գումարների արտացոլումը

- արտարժույթային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոխարկում և վերագնահատումը:

Չափվելություններ՝

- գործընկերների մնացորդների և շրջանառության տեղեկագրերը դրամով և արտարժույթով,
- գործընկերոջ T-հաշիվ՝ դրամով և արտարժույթով,
- գործողությունների մատյան՝ դրամով և արտարժույթով:

ՀԾ-Հաշվետար 6 և ՀԾ-Հաշվապահ 6 համակարգերի համեմատական տեղեկագիր

Ֆունկցիոնալության տաբերություններ	ՀԾ-Հաշվետար 6 (անվճար)	ՀԾ-Հաշվապահ 6
Հիմնական ֆունկցիոնալություն		
Գլխավոր գիրք	✓	✓
Բանկ և դրամարկղ	✓	✓
Դեբիտորների և կրեդիտորների հաշվառում	✓	✓
Ֆինանսական հաշվետվություններ, ԱԱՀ-ի հաշվարկ, Տեղեկանք հարկային հաշիվների վերաբերյալ	✓	✓
Բազմարժույթային հաշվառում	✓	✓
Հիմնական միջոցներ	-	✓
Պահեստ	-	✓
Աշխատավարձ	-	✓
Համակցում ՊԵԿ-ի e-Invoicing համակարգին	✓	✓
Համակցում ՀԾ-ԻնտերնետԲանկ համակարգին	✓	✓
Տիպային գործողությունների սցենարներ	✓	✓
Օժանդակ ֆունկցիոնալություն		
Մեկից ավելի կազմակերպությունների հաշվառում	✓	✓
Excel-ում հաշվետվությունների գեներացման միջոցներ	-	✓
Excel-ից տեղեկատվական տվյալների և փաստաթղթերի ներմուծում	-	✓
Տվյալների արտահանում և ներմուծում XML ֆորմատի ֆայլերի միջոցով	✓	✓